

Լեզուները, թէ և խաղաղական լեզու
էր կը գործածեն, Կ. Պոլսոյ շուրջը Ռուս-
աց բանակին շարժումներուն վրայ կաս-
կած կը յայտնեն :

Փարիզ 19 մայիս .
Երեսփոխանաց ժողովը թիւսընթիւ պա-
լատը նորոգելու առաջարկն ընդունեց :

Փարիզ 20 մայիս .
Բեղերսպուրիէն եկած լուրերը կը ծա-
նուցանեն թէ Շուվաթի կոմսն ազգուա-
պէս հարուածներ է Այսթէֆանոսի դաշ-
նադրութիւնն, և իւր գաղափարները
խոր տպաւորութիւն ըրեր են կայսեր վը-
րայ : Շուվաթի կոմսը լոնտրա կը վերա-
դառնայ մեծ պիլոմներ ընելու իշխանու-
թեամբ : Պատճառներ կան հաւատարմու-
թէ լոնտրայի և Բեղերսպուրի կառավա-
րութեանց մէջ կարգադրութեան մը հի-
մերն որոշուած են :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Համլտի կառավարիչ Մագհար
փաշան իշէի (Ատանա) կառավարիչ
անուանեցաւ, փոխանակ Սիմֆու-
շային՝ որ Համլտի կառավարիչ ան-
ուանեցաւ :

Պոլսու կառավարիչ Նէմիւ պէյ
Գարա Հիւսարի կառավարիչ անուա-
նեցաւ փոխանակ Ալի Բիգա պէյին՝
որ Պոլսու կառավարիչ անուանեցաւ :

Գըրլէհի կառավարիչ Մուսթաֆա
պէյ Պոլսու կառավարիչ անուա-
նեցաւ փոխանակ Մէհմէտ փաշային՝
որ Գըրլէհի կառավարիչ անուանե-
ցաւ :

Երէկ ժամը չորսուկէսին միջոց-
ները քանի մը հարկուր տգէտ գաղ-
թակները՝ Ջրաղանի կայսերական
պալատը մանկով՝ չբխայուր ինչ
նպատակաւ, մէջը գտնուող պաշա-
պան զինուորացի հետ կռուի բռնուե-
ցան : Անմիջապէս մօտակայ պաշա-
կանսցներէն և Երլուղի կողմէն բող-
մաթիւ զօրականք հասնելով, խու-
վարարները ցրուեցին, և մէկ քանին
ալ ձերբակալեցին, որք հիմա քըն-
նութեան ենթարկուած են :

Այս կռուին մէջ, որոյ լուրը բաւա-
կան երկրից և իրարանցում պատճա-
ռեց մայրաքաղաքին մէջ, քառու-
նի չափ մարդիկ մեռեր կամ վիրա-
ւորուեր են : Մեռեալներուն մէջ է
նաեւ Ղալաթա-Մարայի նախորդ տը-
նօրէն Ալի-Սուլայի, որ այս յիմա-
րական ձեռնարկին թելադիր և հե-
ղինակն է եղեր :

Առայժմ ասիէ աւելի տեղեկու-
թիւն մը չկայ այս ձախող դէպքին
պարագաներուն և մանաւանդ նը-
պատակին վրայ, բայց անշուշտ քըն-
նութիւնն յերևան պիտի հանէ :

Երէկ Ջրաղանի պալատը ծովէն
ու ցամաքէն պաշարուած էր զօր-
քով, բայց այս առաւօտ պաշարումը
վերցաւ :

Երէկ իրիկուն հետեւալ պաշա-
նական յայտարարութիւնն հրատա-
րակեցաւ Բ. Դաւեն :

« Ալի Սուլայի անուն անձն, որ
իւր մեքենայութեամբ և ողորդի
ու պետութեան դէմ ի գործ դրած
խռովարարութեամբ և ունեգա-
թեամբ ծանօթ է ժողովրդեան, իւր
անձնական խռովայող գիտում
ներն իրաջնել ուղիով, բարին ու
չարն որոշելու կարողութիւն չունե-
ցող քանի մը մարդ իկ իրեն հետ մի
տղուց, և իւր նպատակն ալ անոնց
չիմայնեցնելով, այսօր ժամ չորսին մի-
ջոցները Ջրաղանի պալատին տու-
ղեաց, և հետի մարդոցմէն ոմանք
յաջողեցան պալատը մանել խռովու-
թիւն հանելու համար : Բայց շնոր-
հիւն Աստուծոյ, արագ և ազգու մի-
ջոցներ ձեռք առնուելով՝ ամբողջ
ցրուեցաւ :

« Այն գաւազարութեան հեղինակ
Ալի Սուլային սպաննուեցաւ ծագած
հետին մէջ, և գլխաւոր դաւակից-
ներն որ խիստ փոքրաթիւ են, բըռ-
նուեցան :

« Այս խռովորար մասնախումբը
ճիւղեր չունենալով, հաստարակոց բա-
րեկարգութիւնն ու ապահովութիւնը
վերջ Սուլային հովանաւորութեամբ
բնաւ չաւրուեցան :

« Վիհ Սուլային հրաման քաւ-
որ ձերբակալելու գաւակիցք անմի-
ջապէս քննուելով ու դատուելով,
ըստ օրինաց պատժուին : »

Մայրաքաղաքիս Ռուսական նոր
գետապան Լուպանով իշխանը կիրակի
օրը մայրաքաղաքիս Ռուս գաղթական-
նութիւնն ընդունեց, և անոնց ու-
ղերձին պատասխանելով ըսաւ թէ
ներկայ քաղաքական վիճակը չիթ
և անստոյգ է :

Պատերազմական գործոց նախա-
բար վսեմ. իզգէթ փաշան կիրակի
օրը գնդապետի տեղակալ Ծաբեր
պէյին և Մամիկանեան Միքայիլ
Մուրատ էֆէնդիին հետ այցելու-
թեան գնաց թօթիւպէն զօրապետին
յԱյսթէֆանոս :

Վեհ Սուլային ընդհանուր նե-
րում շնորհեց Եսենայի և Թրֆայի
պալատաւան, որք հնազանդութիւն
յանձն կառնուին :

Յունական թրաքի լրագիրը կը
ծանուցանէ թէ ուրբաթ իրիկուն Այ-
սթէֆանոսի թատրոնին մէջ ներկա-
յացում եղած միջոցին՝ Ռուսաց ու-
տիկանութիւնը թատրոնին մէջ հան-
գիստտես գտնուող անդրիայի մը
ձերբակալելու է իբրեւ լրտես :

Թղթադրամոց բարձման յանձնա-
ժողովը կը ծանուցանէ թէ ալիւրին
վրայ դրուած տրոց հասողիւն գու-
մարը մայիս 6 ին 6.186.016 շըշի հա-
սած է :

Մամուլ լրագիրն, որ ժամանակէ
մի վեր հարկեցուցիչ պատճառներ-
րով դադարած էր, այս շարժուեալ
էն հրատարակելու սկսաւ իբրեւ սոսկ
ազգային շարժաթիւթով՝ արտօնա-
տէր Այսթէֆան Գէորգ էֆէնդիի տը-
նօրէնութեամբ :

Կը մտղմենք որ յիշեալ թերթին
իւր նոր վիճակին մէջ ազգին ճշմա-
րիտ շահերը պաշտպանելու և ժողո-
վուրդը լուսաւորելու միջոց մը լլա-
րով՝ ամեն ընթերցասէր ազգայնոց
համակրութիւնը գրաւէ և ըստ ար-
ժանւոյն քաջալերի :

Ուրբաթէն շաբաթ լուսնալու գի-
շերը բերայ Տօրապ-Տէրէ թաղը հըր-
գեհ պատահելով չորս տուն և փոռ
մայրեցաւ :

Այս առաւօտ ժամը կէսին մի-
ջոցները թեթեւ երկրաշարժ մը գեղա-
նեցաւ մայրաքաղաքին մէջ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԷՍԶԱՄԱՐՈՒՄԱՆ

8 մայիս երկուշաբթի իրիկուն	9,36
9 մայիս երեքշաբթի առաւօտ	9,32
Բացուեցաւ	9,32
Ժամ 6 ին	9,32
Բուռն իրիկութեամբ	Փր. 32 50
Թղթադրամ	Լր. 281 20

ԸՆԹԱՅՔ ՈՐԺԵԹՂՈՅՑ

Կ. Պոլսի 8 Մայիս

Ստիւթէ Ժ. Երկրաշարժի Լուր. 3,	
Փոխանակութեան	2, 5
Կ. Պոլսոյ Պատեպիւն	3, 2
Քրէտի Ժ. Երկրաշարժի	2, 12
Քրէտի Օսթիւթ-Թիւրք	—
Փոլս 1863	Ֆր. 41
— 1865	— 42
— 1869	— 40
— 1872	— 14 75
— 1873	— 39
Թրաքիայ	Օսթիւթ 1 10

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ

8 Մայիս

Անդր. Լիւր	Վր.	108 37
Նաթուրոն ոսկի	—	87
Իմիւտիւր Ռուս	—	88 35
Գըրլուից	—	51
Չինգ ֆրանք	—	—
Չինգ լոյ	—	121
Պլինի	—	173

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ՀԱՅԲ. — ԻՐԵՆՑ ԱՆՑԵԱՆՆ ՈՒ

ԱՊԱՊԱՅՆ

Անդրիական Կոստանթնուպոլիս (բարի
խօսքեր) անուն ամսաթերթը սոյն
մակագրով կարեւոր յօդուած մը հը-
րատարակած է իւր վերջին թիւոյն
մէջ՝ Պ. Ճօրճ Սմիթ Անդրիական հե-
ղինակութեամբ :

Երկու ամսաթերթն՝ որ պատկե-
րադարձ է, միանգամայն մեծ և
փոքր Արարատ լեռներուն պատկեր-
ներն հրատարակած է, ինչպէս նաեւ
վերաբաւոր Հայ վարդապետի մի
Մոսկուայի Ռուս մատարապետին՝ Գեր-
Ֆիլարէթի՝ պատկերները, որոց գէմ-
քին ք ծագութիւններն իրարու հետ
բաղդատելով, վերջինը խիստ տգեղ
կը գտնէ իւր մանկական կերպարա-
նօք, թէպէտ և կուրծքը նշաններով
զարդարուած :

Հայկական սեռին գեղեցկութիւ-
նը ցուցնելու համար յիշեալ թերթը
հին Հայ թագաւորի մը պատկերն ալ
դրած է, թագն ի գլուխ, որոյ
վառվաւուն աչքն ու դէմքին գծադը-
րութիւնը խիստ նշանաւոր են :

Ահաւասիկ յիշեալ յօդուածը :

« Ջորս ազգայնութիւն կամ մաս-
նաւոր սեռեր մեծ շահ մ'ունին վեր-
ջին պատերազմին վախճանին մէջ,
զոր Ռուսք կատարեցին Սոփոյ մէջ
կարսի անկումէն և Եւրոպիոյ մէջ ալ
Բլէյքայի անձնատուութեան ետեւ :

Հիւսիսական ժողովուրդը նախկին
յերաւմախութեան ժամանակ թեա-
ղիան և Մակեդոնիան չէր կրցած
ձեռք անցունել. և այս մասին բան
մը չընելով կը պահանջէ նախ իւր հին
երկրը մինչև Մարիցա գետը, և
կուղէ նորէն կոստանդնուպոլիս մըտ-
նել իբրեւ ներկայացուցիչ այն տե-
րութեանց՝ որք չեն կրնար Ռուսիոյ
վստահել :

Սրաջն ապագային ժառանգն է,
ինչպէս Հիւսիսն անցելոյն : Եթէ այս
երկուքը կարենան համաձայնել, Ռու-
սիոյ տեղ չմնար Դանուբի հարաւա-
յին կողմն, և արեւելեան խնդիրը կը
լուծուի Եւրոպական մասին մէջ :

Բայց թէ և Սրաջներն երկուք ժա-
մանակ ճնշում կրելով՝ ստորագի մի-
ութիւններ ունեցած են, կրնան տա-
կալին Աստուրիոյ և Ռուսիոյ իշխա-
նութեանց ազատել և անկախութեան
պատրաստուելու ժամանակ գտնել
Եւրոպիոյ երաշխաւորութեան ներքեւ :

Երկուքն Արիական կողմն երկու
ազգ կը պարսնակէ Հիւսիսական ազ-
գէն աւելի հին, որք Սրաջներէն շատ
աւելի ճիշտալ են :

Հրէայն և Հայն իրենց սկզբնա-
ւորութիւնը պատմութեան նախնա-
կան ժամանակները կը գտնեն :

Ասոնք կը նշանակեն իրենց նախ-
նիքն Աստուածաշունչին ցուցած Նոյի
ազգաբանութեան մէջ. Նոյի՝ որ հին
աշխարհը բաղմամբաւ ըրաւ՝ մինչև
ցարդ Հայկական եղող Արարատէն
սկսեալ :

Եթէ Ռուսներն պետութեան ներ-

* Սոյն ամսաթերթին հրատարակիչն է
Պ. Տօնալու Մարքոս՝ որ Անդրիոյ թա-
ղուէոյն մատրանապետներէն մին է :

կայ տաղնապալից վիճակին մէջ Հը-
րէայն տակաւին լուռ է, Հրէից ազ-
գային կուսակցութիւնը միշտ աճե-
լու վրայ է՝ արեւելքէն արեւմուտք
տիրող յուզման ներքեւ :

Սիր Մօզէս Մօնթէֆօրէի նման
ծերունիներ, և Պոլսոյ-Բէշթի Հը-
րէական վարժարանին դասատու (բը-
րօֆէսօր) ֆօֆմանի նման երիտա-
սարդներ նուիրական համակրութիւն
մը կը ցուցնեն Պաղեստինի, որ ոչ ևս
իրայէի աճիւնին համար գերեզման
մի՛, այլ հայրենիք մը՝ անոր ցրուեալ
զաւակաց, և գահ մ'անոր առեւելոյթ
զօրութեան :

Ինչպէս Հրէայն աստուածային
կրօնքին ամենէն հին ներկայացու-
ցիչն է, նոյնպէս և Հայը քրիստոնէ-
ութեան :

Նոյի զաւակունքն (Հայք) որք Ա-
րարատայ լեռան յարեալ են, Ասոր-
ւոյ, Եֆրատայոյ, Հիւսիսայն և Լա-
տինայ նման աշխարհաշահ քաղա-
քակրթութեան ջանքեր ըրած և քը-
րիստոնէութիւնն ընդունող առաջին
ժողովուրդն եղած էին, իրենց Տըր-
գատ թագաւորը Գրիգոր Լուսաւոր-
չէն մկրտուեցաւ՝ կոստանդնուպոլս կայ-
սեր քրիստոնէութիւնն ընդունելէն
37 տարի առաջ :

Գրեթէ տասն և վեց դար չորս
հինգ միլիոն* Հայք իրենց հաւատքն
անվճար պահեցին, ինչպէս հինգ
վեց միլիոն Հրէայք :

Հայոց այս հաստատամտութիւնը
գիմացալ կայսրապաշտից հալածման,
Սարակինսոսաց սրոյն, և այն ամեն թըշ-
նամութեանց, որք իրենց անկախու-
թեան վերջին հարուածը տուին :

Հրէից նման Հայք ևս բազմու-
թեամբ ուրիշ երկրները գաղթեցին՝
կենաց, ընչից և հաւատոյ պաշտպա-
նութիւն գտնելու համար, որք ի-
րենց երկրին մէջ իրենցմէ զաւցուած
էին :

Ես անոնց շատերուն հետ տես-
նուեցայ և շատերը կը ճանչեմ, ի-
րարմէ խիստ հուռ քաղաքներէ,
զորօրինակ կալիթթա, Պոմպայ, Կ-
Պոլիս, Մոսկուա և Ամսթերտամ որք
շատ հեռի են Արարատէն :

Հազարաւոր հարուստ Հայեր Բը-
րիտանական հպատակ են, հազարա-
ւորներ ևս իրենց երկրին մէջ բողո-
քական եղած են Ամերիկայի Միւի-
օնարաց ձեռքը :

Հիւսիսական, Սլաւոն և Հրէա-
կան շահերն ամենուն ծանօթ են,
բայց քիչեր կան տեղեակ Հայոց վի-
ճակին :

Կայ ժողովուրդ մը՝ որ Հրէից
առեւտրական յաջողակութեան վրայ
աւելցնէ նաեւ պատմական իրաւունք
և ազնուութիւն մը՝ նախնի քրիստոն-
եայ թագաւորութեան յատուկ, ո-
րոյ մտաւորական կարողութիւնը Ռու-
սիա կը գործածէ Անդրակովկասեան
գաւառաց մէջ, և որոյ մամուլն Եւ-
րոպիոյ գիտնոց առջև նշանակութիւն
ունի : Թոյլ պիտի տրուի՝ որ այսպի-
սի ժողովուրդ մ'ուրիշ տէրութեան
մը կողմանէ կընուի, ինչպէս տըղի-
տութեամբ թողուած է որ այնչափ
երկար ժամանակ հարստահարի :

Արեւելեան խնդրոյն լուծմամբ՝
Հայաստան Ռուսական դատաւ մը
պիտի ըլլայ : Թէ Արիւր Կալաւաթիւ
բայց ամենահարկաւոր քրիստոնեայ
ժողովուրդեան մը լուսաւորչն օրերը պի-
տի վերադառնան, Հայք 1876 հոկ-
տեմբերի մէջ մեծ տէրութեանց յի-
շատակալի մը ներկայացուցած է-
ին Կ. Պոլսոյ դեսպանախորհրդին բա-
նալ :

* Այս յայտնի տվաւ մի՛, քանզի թէ
և Հայոց թիւն այժմ այնչափ կրնայ կար-
ծուի, հին ատեններն աւելի բազմաթիւ
էին : Ծան. Խմբ.

